ԳԵՐ. Տ. ԽՈՍՐՈՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԷՄԻՐԶԵՅԱՆ

Նորապսակ Տ. Խոսրով եպս. Էմիրզեյանը, ավազանի անունով՝ Անդրանիկ, ծնվել է Կ. Պոլսում, 1932 թվականին, հավատացյալ և բարեպաշտ հայ ընտանիքի ծոցում։ Հայրը՝ Կարապետ, ակնցի, մայրը՝ Մայրենի, արաբկիրցի։

Նախնական կրթությունն ստացել է Պեզճյան վարժարանում, իսկ միջնակարգը՝ Բանկալթիի Մխիթարյան վարժարանում։

1951 թվականի դեկտեմբերին Գումգաբուի մայր եկեղեցում սարկավագ է ձեռնադրվել հոգելույս Տ. Գարեգին պատրիարքից և մինչև 1953 թվականը հետևել է պատրիարքարանին առընթեր բացված Ընծայարանի դասընթացներին։ 1954 թվականին ուսուցչության է կոչվել Սկյուտարի Ս. Խաչ դպրեվանքում։

1957 թվականին ընդունվում է Անթիլիասի դպրեվանքի Ընծայարանի բաժինը, և 1958 թվականին փայլուն հաջողությամբ ավարտելով այն, կուսակրոն քահանա է ձեռնադրվում Անթիլիասի Մայր Տաճարում՝ Գեր. Տ. Արտակ եպս. Մանուկյանի ձեռամբ։ 1961 թվականին հոգելույս Տ. Զարեհ կաթողիկոսից ստանում է մասնավոր վարդապետության աստիճան։ 1958—1962 թթ. Անթիլիասի վանքի մեջ վարում է մի շարք պատասխանատու պաշտոններ։

1962 թվականին վերադառնում է Կ. Պոլիս և նշանակվում քարոզիչ եկեղեցիների, և ուսուցիչ՝ Ս. Խաչ դպրեվանքի։ 1963 թվականին ստանձնում է Ս. Խաչ դպրեվանքի փոխ-տեսչի պաշտոնը։

1965 թվականի հունիսին Բեյ-օղլուի Ս. Երրորդություն եկեղեցում ստանում է ծայրագույն վարդապետության իշխանություն՝ ամենապատիվ Տ. Շնորհք սրբազան պատրիարքից։

1966 թվականի հունիսին Կ. Պոլսում սրբազան պատրիարք հոր նախագահության ներքո գումարված կրոնական ժողովը Տ. Խոսրով ծ. վարդապետին տվել է եպիսկոպոսացման ընծայագիր։

1966 թվականի նոյեմբերի 13-ին, կիրակի օր, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Մ. Տաճարում եպիսկոպոս է ձեռնադրում և օծում Տ. Խոսրով ծ. վարդապետին։

1966 թվականի նոյեմբերի 7-ին Տ. Խոսրով ծ. վարդապետը գրավոր դիմում էր ներկայացրել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Մ. Աթոռ Ս. Էջմիածնի միաբան դառնալու համար, հրաժարվելով Անթիլիասի Կիլիկյան Աթոռի միաբանությունից։ Ն. Ս. Օծությունը հարգելով եղած դիմումը, բարեհաճել էր տալ իր համաձայնությունը, ընդունելով նորապսակ սրբազանին միաբան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի։

Գեր. Տ. Խոսրով եպիսկոպոսը գտնվում է իր հոգևոր և իմացական ուժերի հասունության և ծաղկման շրջանում։ Սրբազանը հավատավոր, պատրաստված իր կոչման և իր պարտականություններին նվիրված հոգևորական է։

Կ. Պոլսի սրբազան պատրիարք հայրը, Ստամբուլի հայ հավատացյալ համայնքներն ու ժողովուրդը նորապսակ սրբազանից սպասում են արդյունաշատ և բեղուն գործունեություն, ի պայծառություն Հայաստանյայց Եկեղեցու։